

Վ. Սևաթելյան

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրառությունները որևէ դերանվան, գոյականի կամ գոյականացած այլ խոսքի մասի հոլովական կախվածությունն է մի այնպիսի բառից, տվյալ դեպքում բայից, որով պայմանավորվում է դերանվան, գոյականի կամ գոյականացած այլ խոսքի մասի այս կամ այն հոլովը:

Հեղուներում խոշոր նշանակություն ունի բայի և գոյականի կամ գոյականացած մի այլ խոսքի մասի ու դերանվան խնդրառական հարաբերությունը, որտեղ բայը հանդես է գալիս իբրև խնդիր առնող կամ իշխող բառ, իսկ գոյականը կամ գոյականացած խոսքի մասը, դերանունը՝ խնդիր կամ ենթարկվող բառ:

Խնդրառությունը կատարվում է երկու միջոցով. մի դեպքում խնդիրները խնդրառու բառերի հետ կապվում են անմիջապես թեք հոլովներով՝ առանց որևէ միջնորդող բառի, մի այլ դեպքում խնդրառու և խնդիր բառերի կապակցությունը տեղի է ունենում կապերի միջնորդությամբ: Անմիջական հոլովներով կապվող խնդիրները ուղղակի ենթարկվում են խնդրառու բառին, տվյալ դեպքում բային, իսկ կապերով խնդիրները ենթարկվում են խնդրառու բառերին՝ կապերի միջնորդությամբ: Կապը հույնական հանդես է գալիս իբրև խնդրառու բառ, ապա իր խնդրի հետ միասին ենթարկվում է բուն խնդրառու բառին՝ բային, իբրև մի միասնական խնդիր: Եթե կապը ունակ է մի քանի հոլովով խնդիր ունենալու, ապա կապի տվյալ խնդրի հոլովը որոշվում է բուն խնդրառու բառով, այսինքն՝ կապից անկախ նրա խնդիրը ենթարկվում է բային: Իհարկե դա լինում է մի այնպիսի հոլովով, որով ունակ է կապը խնդիր ունենալու, այլապես բայը չի կարող պարտադրել, որպեսզի կապը իր խնդրառությունն սահմաններից դուրս գա:

Այստեղ մենք խոսելու ենք առանց կապերի Վիրառվող խնդիրների մասին: Խնդրառությունը կապված է բայի սեռի հետ, որ մտնում է բայիմաստի մեջ: Ըստ սեռերի բայերը լինում են անցողական և անանցողական: Անցողական բայերի գործողությունը տարածվում է առարկաների վրա երկու բնույթով՝ ուղղակի, երբ առարկան գտնվում է բայի անմիջական ազդեցության սահմաններում, երբ բայի գործողությունը առաջացել է, կամ գոյություն ունի միայն այդ տեսակի առարկաների հետ կապված, և առանց դրանց աներևակայելի է բայը: Սկզբնապես այդ տեսակի առարկաները արտահայտվել են բայի հետ միասնաբար. շինել, ուտել, խմել և այդ տեսակ բայերը առանց տուն, օրսփիք, հաց, ջուր և այլ բառերի չեն եղել. հետո է, որ սրանք անջատվել են և գիտվել իբրև այդպիսի բայերի անհրաժեշտ օբյեկտներ, որոնք եթե նույնիսկ չեն հիշատակվում, բայց միշտ բայի գործողության հետ պատկերացվում են: Խնդրառության մեջ հիշյալ առարկաները հանդես են գալիս հայցական հոլովով և կոչվում են Տեղեկադիր 7—4

ուղիղ խնդիր, կամ ուղղակի խնդիր, որովհետև ուղղակի բխում են բայի գործողությունից և սերտ առնչակցվում են նրա հետ: Այս տեսակի խնդրի նշանակությունը այնքան մեծ է շարահյուսության մեջ, որ բայերը ըստ սեռերի, հաճախ դասակարգվում են՝ համապատասխան իրենց ստացած խնդիրներին: Ներգործական բայերը խնդիրներ են վերցնում նաև այլ հոլովներով, բայց դրանք անուղղակի խնդիրներ են, հանդես են գալիս բայի գործողության տարրեր հանդամանքներում և կարող են բառ այդ դրվել այս կամ այն հոլովով, իսկ ուղիղ խնդիրը երբեք չի փոխվում, ինչ հանդամանքում էլ հանդես գա բայը, ուղիղ խնդիրը բխում է բայի էությունից, նրա բայական սեռից: Իսկ մյուս հոլովներով խնդիրները անուղղակի խնդիրներ կամ պարագաներ են, որ ունենում են բոլոր տեսակի բայերը:

Իայց քանի որ խնդրառությունը կապված է բայիմաստի հետ, իսկ բայիմաստը պատմականորեն անընդհատ փոփոխվում է, ապա տարրեր ժամանակներում նկատում ենք նաև խնդրառության զանազանություններ: Նույնիսկ նույն ժամանակամիջոցում միևնույն բայը տարրեր խնդիրներ է առնում՝ կապված այն բանի հետ, թե գործածողը ինչ մոտեցում է հանդես բերում բայիմաստի նկատմամբ: Լեզուներում բացառիկ երևույթներ չեն, երբ ներգործական բայը դադարում է ուղիղ խնդիր վերցնելուց, իսկ չեղոքը, բնդհակառակը, սկսում է առնել ուղիղ խնդիր, այսինքն տեղի է ունենում սեռերի փոփոխություն: Եթե բայերի սեռը սահմանենք ըստ նրանց ուղիղ կամ անուղղակի խնդիր առնելու փաստով, ապա որոշ բայերի իմաստի և խնդրառության միջև կառաջանա հակասություն: Հայերենում բայերի սեռի և խնդրառության մեջ այդ երևույթը նկատվում է բազմաթիվ բայերի վերաբերմամբ: Մենք կաշխատենք այստեղ քննել մի քանի բայերի այդ տեսակի խնդրառության հանդամանքները և բացատրել դրանց հնարավոր պատճառները, որոնք ընդհանրապես վերաբերում են փերականության տվյալ բնագավառին, այսինքն՝ խնդրառությունը:

Հայերենում կարոտել բայը համարվել է չեղոք. գրաբարում այս բայը առնում է երեք հոլով խնդիրներ. կարոտել մի բանի, մի բանից, մի բանով, այսինքն՝ տրական, բացառական, գործիական: Մեր գրական լեզվում վերջին երկու հոլովով խնդիրները աստիճանաբար դուրս են գալիս և մնում է միայն տրականը, բայց և նկատվում է որոշ գրողների մոտ հայցական հոլովով խնդիր, որ ցույց է տալիս, թե բայը սկսում է բարձրվել ներգործական նշանակությամբ. օրինակ՝ գրադարաՆ շատ եւ կարոտել (Թ. 5-րդ, 418): Կարոտել եւ գլուխդ (Նար., 7-րդ, 142): Այնքան կարոտել էի մեր հայրենի լեռները, դաշտերն ու ջրերը (Փափ., 567): Կարոտել բայի հայցականով խնդիրը այժմ օրինաչափական չէ: Ուղիղը տրականով խնդիրն է:

Այժմ հայերենում մի շարք չեղոք համարված բայեր հակվում են դեպի հայցական խնդիրը: Այդ բայերի մոտ հայցականով խնդիրը հնչում է թարմ ու հանդիսավոր. դրանց թվին են պատկանում դիմավորել, գերազանցել, անցնել, շրջել, շրջագայել, այցելել, վերայցելել, գրոհել, հետապնդել և մի քանի այլ բայեր. օրինակ՝ Հիմա այնքան հետապնդիր այդ կատուկը (Շեքս., 1-ին, 443): Վերայցելում ես լուսնի շողքերը (Շեքս., 1-ին, 22): Շիրիմ այցելել (Իս., 1-ին, 75): Այսօր Սովետական ռազմաճակատներն այցելեցին բազմաթիվ գեկեղացիներ (Ս. Հ., 164, 64 թ.): Ճնշվելը գրոհում են բրգամ-

բոցները: Ն. Ս. Բուլգանինը ընդունելով ղեկույցը՝ ղորահանգեսի հրամանատարի հետ շրջագայում է զորքերը (Ս. Հ., 265, 53): Լայն հասարակայնությունը ցերեկը կազմակերպված կերպով այցելեց սովետական նավերը (Ս. Հ., 164, 1954 թ.):

Գյուղացիներն առաջին անգամ էին այդքան հանդիսավոր դիմավորում զարնանացանը (Ն. Ջ., Հ., 83): Գործարանի բանվորները, ինժեներները և տեխնիկները ջանք չեն խնայում Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ուղուցիայի 35-րդ տարեդարձը արտադրական նոր նվերներով դիմավորելու համար (Ս. Հ., 259): Այն, ինչ մենք տեսանք սեփական աչքով, գերազանցեց մեր բոլոր սպասումները (Ս. Հ., 282, 1952 թ.): Նրա բրիգադան զգալիորեն գերազանցել է մեքենայի միջնորդումային աշխատանքի ժամկետը (Նույն տեղում, 271):

Բնչպես երևում է բերված օրինակներից, հիշյալ բայերի հայցական հոլովով խնդիրները մեր լեզվի ներկա շրջանում միանգամայն օրինաչափական են: Այդ բայերի տրական և մյուս հոլովով խնդիրները հնանում են և աստիճանաբար պակասում, չնայած որ այժմ էլ երբեմն կիրառվում են: Հայցականով խնդրառությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ չեզոք բայերը վերածվում են ներգործականների և կարող են նույնիսկ կրավորական ձևով գործածվել. օրինակ՝ միթե այսպիսի ծանր հարվածով պիտի դիմավորվեր իմ վերադարձը (Ս. Խանդադյան, Հոգը, 1-ին, 26): Համեմատելով Միտում է գերազանցել նախարարական իշխանության (Դ. Դ. Վ., 105): Դիմավորում էր մատաղ կյանքին (Նույն տեղում, 52): Ֆինլանդական ռեսպուբլիկայի մայրաքաղաքի բնակիչները ջերմորեն դիմավորեցին ժամանած սովետական նավերին (Ս. Հ., 164, 1954 թ.): Կայցելե նրա լեռներին ու հովիտներին, նրա՝ սիրազվարճ գյուղերին (Մուր., 2-րդ, 147): Դու վեհանձնությունը ցրանից գերազանցել չես կարող (Երվ., 6-րդ, 196):

Հիշյալ բայերի մեջ աստիճանաբար խմաստային նոր փոփոխություններ են կատարվում. առայժմ դրանք այնքան էլ ցայտուն չեն. զուտ բայի սեռի տեսակետից նայելով խնդրին՝ դրանք անցման շրջանում են գտնվում:

Ավելի ներգործականության են հակվում հսկել, սպասել բայերը, որոնք տրականով խնդրի հետ սկսում են առնել նաև հայցական. օրինակ հսկում էինք գոմապահների աշխատանքը (Ն. Ջ., Հ., 227): Անցնում է հսկում սեղաններն ամեն (Թումանյան): Իսկ սպասել բայի մեջ ուժեղ երկփեղկում է առաջացել. սպասել, մեկ նշանակում է՝ կանգնել մեկին սպասել, որ գա հասնի, մեկ նշանակում է՝ ստանալ, ապա կարծել, մտածել, ենթադրել. ահա ըստ այս նշանակությունների էլ կատարվում է խնդրառությունը: Ոչ մի բարի բան չսպասենք ուրեմն (Դ. Դ., Վ., 62): Անքուն սպասում էին իմ վերադարձին (Ն. Ջ., Հ., 344): Գարծես նրանից էր սպասում փրկություն (Նույն տեղում, 46): Ներշնչվե՞ր չէր սպասում այսպիսի վճռական խոսք (Դ. Դ., Վ., 68): Որոնց վնդին էլ սպասում են (Նույն տեղում, 101):

Նայել բայը առնում է տրական հոլովով խնդիր, երբ նշանակում է մեկին, մի բանի նայել, հայացքը սևեռել, իսկ եթե հատուկ գործածությունը նշանակում է ստուգել, քննել, խնդիրը դրվում է հայցականով. օրինակ՝ ես մի թեթև նայեցի գոմերը (Ն. Ջ., Հ., 415): Բայց հենց այս-

տեղից բայը կարող է աստիճանաբար ամրոգջովին անցնել հայցականի, համեմատիչ նայիր ներսս, նայիր սիրտս ու հոգիս (Բնտ. էջեր, 669): Եղես բառը նայել բայի մոտ սովորաբար հայցականով է գրվում. օրինակ՝ ևս քո երեսն եմ նայում (սպասելիք ունեմ, հույսս քեզ վրա է): Բոլորը լուռ իրար երես նայեցին (Ն. Զ., Է., 222): Նորա երեսը նայելիս (Թ. Պ., 2-րդ, 13):

Նայել բայի կապերով խնդիրները արտահայտում են ոճարանական ու իմաստարանական նրբերանգներ. օրինակ՝ ղեպի դաշտերը նայել չի նշանակում նայել դաշտերին, այլ՝ դաշտերի կողմը. օրինակ՝ նա նայում էր էլուշի կողմը (Ն. Զ., Է., 87) նախադասության մեջ նայողը կարող է էլուշին բոլորովին չնկատել, իսկ գործողությունը էլուշին այնքանով է վերաբերում, որքանով նա տարածություն, ուղղություն մոտ է բայի գործողության ոլորտին: Առավել խնդրալից նշանակություն է ստանում վրա կապով նայել բայի խնդիրը, որ ունի նաև վերաբերմունքի նշանակություն:

Հայերենում մի շարք ներգործական սեռի բայեր խնդիր են առնում միայն անձ ցույց տվող բառեր. իրենց իմաստով դրանք չեն կարող խընդիր առնել իր արտահայտող բառեր: Իսկ անձ արտահայտող բառերի հայցականը գերազանցապես տրականաձև է: Եվ ահա երբ հիշյալ բայերի խնդիրները որոշ գործածություններով դառնում են իրեր, վերջիններս նույնպես գրվում են տրականաձև և ըմբռնվում իրեր տրական. այդպիսի բայերից են վնասել, պաշտել, դավաճանել և ուրիշները: Օրինակ՝ երբեք չգավաճանեցին հայրենի աշխարհին (Թ., 3-րդ, 549): Այդ մարդը գեռ ինքն էր դավաճանում ամուսնական անկողնին (Շիրվ., 4-րդ, 62): Նա ֆլաստում է մեր գործին և այլն: Ողջունել բայը ներգործական բայ է, բայց նրա հայցականաձև ուղիղ խնդիրը մեզ համար հնչում է անսովոր, որովհետև այդ բայը վերաբերում է անձի, ուստի վարժված ենք նրա խնդրի տրական ձևին. օրինակ՝ ողջունեց հոր առավուտը (Թ., 3-րդ, 160): Պիտի ողջունես ուղիս դարավոր (Տերյան): Սիրով եմ ահա ևս ողջունում այս հեռաստանը (Ե. Զ., Ե., 188): Գուցե արշալույս ողջունե երկինք (Իսահակյան): Բանակի ընդր ափագներն ու աստիճանավորները ողջունում էին հրամանատարի առավուտը (Ի., 3-րդ, 557): Այդ բոլորի հետ համեմատիր: Ողջունում է նա, գլխարկը ձեռին, շաչող ջրերին (Ե. Զ., Ե., 225): Դուրս եկավ մինչև բակը և բարեկեց եկող հյուրերը (Բ., II, 134): Բարեփում են գարնան գալուստը (Բ., II, 161):

Ունկնդրել բայը նույնպես ներգործական սեռի բայ է, բայց սկզբնապես ունկն եղել է դրել ձևի համար ուղիղ խնդիր, իսկ հաջորդ խնդիրը անուղղակի խնդիր էր տրական հոլովով: Ոնգրառություն այդ հին ըմբռնումը շարունակվում է նաև այն ժամանակ, երբ ունկն և դրել առանձին շարահյուսական ձևերը զագարում են իրեր այդպիսին լինելուց և դառնում են մի բարդ բառ, այսինքն՝ ձուլման պրոցեսից հետո էլ խոսողի և գրողի մտքում ունկնդրել բարդ բառի երկու բաղադրիչների հարաբերությունը գիտակցվել է իրեր բայի և խնդրի հարաբերություն, իսկ հաջորդ խնդրի տրական հոլովի ըմբռնումը շարունակվել է մնալ: Այժմ այս տեսակ բայերի խնդրառության լեզվական տրագիցիան շարունակվում է: Օրինակ՝ Եվ խորախորհուրդ, վեհ գաղտնիքների Անխոս բարբառին լուռ ունկնդրեց (Բսահակյան): Նրանք լուռ քշում էին ձիերը՝ ունկնդրելով հեռ-

վում աշխատող կալսիչների գործյունին (Ն. Զ., Հ., 440):

Բայց օտարի պես էի ունկնդրում

Ինքս իմ հոգուն, ինքս իմ լացին (Տերյան):

Այս կազմութեան բայերի խնդրառության մեջ արդեն սկսում է եր-
վեղկում գոյանալ: Երբ բարդ բառի կազմության մեջ խնդրի և բայի շա-
րանյուսական հարաբերությունը լրիվ մեղմում է, այսինքն՝ խոսողի կամ
գրողի գիտակցության մեջ այն ստանում է միայն բարդ բառի արժեք,
տրականով դրվող նախնական անուղղակի խնդիրը դառնում է ուղիղ
խնդրի հայցական: Սակայն մի անգամից բոլոր բայերի այս տեսակ հին
անուղղակի խնդիրները չեն փոխվում ուղիղ խնդրի: Նենց միևնույն բայը
շարունակում է երկու ձևով էլ խնդիր առնել, որտեղ, իհարկե, վերջիվերջո
հայցականն է հաղթելու, կամ տրականն ու հայցականը իմաստային նոր
տարբերակում են ձևաբ. բերելու: Ձեռնարկել բայը այժմ այդ դիրքի մեջ է.
օրինակ՝ եվ մինչև այդ նպաստը չստանամ, գործի չեմ ձեռնարկի (Նար.,
7-րդ, 315): Այժմ ճիշտը և օրինաչափականն է այս կարգի բայերի տրա-
կան խնդիրը, չնայած որ դա այլևս հին տրականը չէ իմաստով այլ ուղիղ
խնդրի է. համեմատիր:

Եվ մի անգամայր կարմիր մատիտ ձևաբ.

Գործի է ձեռնարկում նա բուն ու կենսահորդ (Ն. Զ., 3-րդ, 9):

Նա որոշեց ձեռնարկել այնպիսի մի գործարար միջոցի (Մուր., 3-րդ 357):

Ենթերիվ իմաստի այդ փոփոխության արդեն նկատում ենք նաև
հայցականով խնդիր, որ վերջիվերջո գերակշռող է հանդիսանալու. օրինակ՝
Մեր պատանի բնասերները նոր և կարևոր գործեր են ձեռնարկել (Վ. Ա.,
Ս. Ա., 416):

Մի նոր գործ է ձեռնարկում (Սարյան):

Ահա մի ամբողջ ամիս է, ինչ մի կարգին գործ չի ձեռնարկել
Ս. Խանդավյան, Հ. 1, 143¹:

Նույն պրոցեսում է գտնվում սալասարկել բայը: Չնայած խնդիր է
առնում տրական հոլովով, բայց արդեն տեղ-տեղ երևում է նաև հայցա-
կանը: Օրինակ՝ ՏՈՐԻՆՈՎ ՎԻՃԱԿԻՎԱԾ է իր «փողային տնտեսության» հետ
միասին սպասարկել սոցիալիստական արտագրության զարգացման ու
սպասարկման գործը²:

Սրանց միանգամայն հակադիր հին չեղոք ակնարկել բայը այժմ
միայն հայցական հոլովով է խնդիր վերցնում. օրինակ՝ փափսաց մեկը
մյուսի ականջին՝ ականարկելով նախագահի ստորագրությունը (Ն. Զ., Հ., 10):
Ձայն տվեց Մաթոսը՝ ականարկելով տեղացող ձյունը (Նույն տեղում, 28):
Այս նույն ձևով արդեն հայցական հոլովով խնդիր են վերցնում սահմա-
հարել, վարձատրել, քողարկել, վիճարկել, լողորսել, սահմանափակել և
այս կարգի այնպիսի ներգործական բայերը, որոնց երկու բաղադրիչների
բայի և խնդրի հարաբերությունն մթնել է:

Այս շարքին պատկանող այն բայերը, որոնց խնդիրը միայն անձ
կամ անձնավորված բառ է եղել, առել են տրական հոլովով խնդիր, որը,
ինչպես տեսանք, միայն ձևով է տրական: Հետագայում, երբ հիշյալ
բայերը խնդիր են առնում ոչ անձնավորված բառեր, ըստ խնդրառության

¹ Համեմատիր: Միայն բերկրությանը շուտ և և առնում... այն անտառների քառմու-
քունը գով (Խ., II, 186—187):

² Ի. Վ. Լևալին, Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում, 1952, էջ 19:

տրագիցիայի, ավելի ճիշտ քստ քերականական անալոգիայի (համարանու-
թյուն), այդ կարգի բառերն էլ տրականաձև են դրվում:

Սակայն այստեղ էլ սկսում է հայցականը թափանցել. օրինակ՝
ես ոռւսի պատվի դեմ ծնկի եմ գալիս,

Երկրպագում եմ պայծառ ծնունդը նրա (Անթ., 473):

Լսել բայը ունի երկու խնդիր՝ լսել մի բան, լսել մեկին, բայց հենց
իր արտահայտող խնդիրը նույնպես երկփեղկվում է, այսինքն՝ թե հայցա-
կանով է դրվում, թե տրականով. լսել բայը հայցական խնդրով նշանա-
կում է սուսկ լսելու ֆիզիոլոգիական գործողություն, իսկ տրականով խնդրի
հետ՝ ուշադրություն դարձնել, ենթարկվել. օրինակ՝

Լսում են մեկտեղ իմ արգար խոսքին (Իս., 2-րդ, 175):

Լսում է նրա անուշ փաղաքուշ խոսքերը, խոր ու խելացի մտքերը
(Թ., 3-րդ, 344): Լսիր մի անգամ խոսքը պոետի (Ե. Զ., Ե., 210):

Լեռնը ցրում էր կնոջ կասկածները և հորդորում չլսել բամբասանք-
ներից (Ն. Զ., Զ., 153): Երկփեղկվում է նաև անձի խնդիրը. մի դեպքում՝
նշանակում է ենթարկվել, մի այլ դեպքում լսել մեկի խոսքը. պատմածը,
որ արդեն դժվար է ասել տրական է, թե փոխանուն հայցական. օրինակ՝
նրան լսում էին հարգանքից դրդված (Ն. Զ., Զ., 59):

Մի քանի ներգործական բայեր հնից եկող տրագիցիայով առնում
են տրական հոլովով խնդիր. դրանք են՝ տիրել, հաղթել, օգնել, բայց այժմ
սրանց հին տրագիցիան էլ սկսում է խախտվել. օրինակ՝ գնացել է մի
աշխարհ է տիրել (Իս., 3-րդ 120): Բայց ոչ մի զորք չի տիրի սիրտը
աղջկա (Սարյան): Լամիյեի սերը մի օր պիտի հաղթե մորս մոլեռանդու-
թյունն ու կամակորությունը (Շիրվ., 5-րդ, 446):

Մի շարք ներգործական սեռի բայեր առնում են հատկապես մասին
կապով, կամ մյուս հոլովներով յուրահատուկ խնդիրներ, մեզ համար ան-
սովոր է դրանց հայցական հոլովով խնդիրը. այդ բայերից կարելի է հի-
շատակել՝ մտածել, խոսել, վկայել, զեկուցել, կասկածել:

Բայց և սրանց մոտ նկատվում են անսովոր հայցական խնդիրներ,
օրինակ՝ դուք մեր սովետական պայծառ հոգին ամուր եք վկայել (Անթ.,
198): Ով պիտի զեկուցի Միհրնեսերհին իր ժամանումը (Դ. Դ., Վ., 190):
Պետք է մորս հետ դաշույններ խոսեմ, բայց ոչ գործածեմ (զուցե այստեղ
գործածել բայի ձգողությունը. Շեքս., 1-ին, 63): Յուրաքանչյուրը դրանցից
անպատվություն է համարում յուր մայրենի լեզուն չխոսել (Մուր., 1-ին,
291): Լավ մտածիր քո զարմանքը (Շիրվ., 3-րդ, 104): Խոսել են Նոյ Նա-
հապետի լեզուն (Հյուս., 58, էջ 8): Ամոթ է կասկածել նրանց հարաբերու-
թյունը (Շիրվ., 3-րդ, 386):

Մի քանի չեզոք բայեր առնում են հայցական հոլովով խնդիր. այդ-
պիսի բայերից են՝ լալ, ողբալ, գնալ, քնել, ընկնել, մտնել, անցնել, պարել
արտասվել և այլն, որոնց հարցը կքննվի մի քիչ հետո: Մինչև այս,
առայժմ հետևյալը:

Խնդրառություն այս տեղաշարժերը կապված են բազմաթիվ լեզվա-
կան երևույթների հետ և ցույց են տալիս լեզվի քերականական օրենք-
ների ներքին սերտ առնչակցությունը միմյանց հետ, մի բան, որ պատ-
ճառ է դառնում քերականության և տրամաբանության օրենքների տա-
րամիտմանը մի կողմից, քերականության մեջ բազմաթիվ բացառու-

թյունների առաջացմանը մյուս կողմից: Քերականության նորմատիվ օրենքները խնդրառության այս բաղադրիսի հակասական երևույթները միանգամից չեն կարող վերացնել. կենդանի լեզվի մեջ դործում են քերականության բաղադրան ու բարդ օրենքներ ու օրինաչափություններ, որոնք միմյանց հետ փոխադրեցության ու փոխադարձ կապի մեջ են հանդես գալիս. հատկապես փոխադրեցության պարագան անընդհատ շարժման ու փոփոխության մեջ է գնում այս կամ այն քերականական նորմատիվ օրենքը՝ ի հակասություն տվյալ օրենքի հետ կապված ներքին պատճառակցությունների, որոնք գրան մղում են մի որոշակի ուղղություն:

Մենք այստեղ կրկենք այն փոխադրեցության երևույթները, որոնք պատճառ են դառնում հայերենի խնդրառության այդօրինակ երևույթների համար:

Այժմ չեզոք համարվող մի շարք բայեր հնում եղել են և՛ չեզոք, և՛ ներգործական, այսինքն՝ ունեցել են թե՛ հայցականով, թե՛ տրականով և թե՛ այլ հոլովներով խնդիրներ: Այգալիսի բայեր են՝ զզվել, լալ, ողբալ, աղմկել, կանգնել: Հին հայցական հոլովի անալոգիայով այգալիսի բայերը մեր գրական լեզվում, չնայած իրենց լրիվ չեզոքացման, որոշ շրջանում ուղիղ խնդիր հայցական են վերցրել. օրինակ՝ Տերը տարածն էր լայի, գելը՝ մնացածը (Առած., 68): Աղմկում են մթին անտառների հավերժական լուրջյունը¹ (Բ., 3-րդ, 132): Ոչ մինը կարողացանք ուտել և ոչ էլ մյուսը, երկուսն էլ զզվեցինք (Պ. Պոռչյան, 3-րդ, 397): Շղթաները աղմկում էին նկուղի խորին լուրջյունը (Բ., 3-րդ, 249): Գանգնել տան շրջապատը (Բաֆֆի): Համեմատիք նաև՝ Դուք էլ առաջուց եք արտասուել այդ խղճալի դրուքյունը (Թ., V, 229): Ես էլ այդ չեմ զարմանում (Նար., 4-րդ, 279): Այժմ այսպիսի խնդրառությունը արգեն վերացել է, բացի լալ բայից, որն իր խնդիրով կայունացել է:

Իրարարյան որոշ թվով չեզոք բայեր հնում ունեցել են ի, առ և այլ նախդիրներով հայցական խնդիրներ. հետագայում նախդիրները մեր լեզվի զարգացման օրինաչափություններով ընկել են, և ստացվել է այնպես, որ մեր գրական լեզվում այդ չեզոք բայերը առնում են հայցականով խնդիր. օրինակ՝ Անցավ Կուր գետը արծվի նման (Թ., 2-րդ, 327), նստել ձիերը. Պետք է դուրս գանք պատերազմ (Դ. Դ., Վ., 104): Իրար գեմ կռիվ ենք դուրս եկել (Նույն տեղում, 37): Հետո պետք է գնալ քաղաքային խորհրդի նիստը (Շիրվ., 3-րդ, 27):

Այս տեսակ խնդիրներից մի քանիսը կարող են ըմբռնվել իրեն տեղի պարագաներ ուղեորման հայցականով, որոնք դարձյալ նախդիրներ են ունեցել. ինչպես՝ Կովերն ընկել էին կանաչ առվույտը (Ջարյան): Կարող էր մտնել Թումասի դրուքյունը (Մուր., 1-ին, 300): Ես հասկանում եմ քեզ և լիովին մտնում եմ քո դրուքյունը (Նար., 7-րդ, 206): Սրանց անսո-

¹ Համեմատիր: Սենյակը աղմկվում է հյուրերի զվարթ և բարձրաձայն խոսակցություններով ու քրքիջներով (Շիրվ., 3-րդ, 112):

² Համեմատիր՝ և անցեալ որպես զարծուի սրաթե ընդ գեցն (Պոր., II Ծ.): Հեծալ արի արքայն Արտաշէս ի Սեւան դեղեցիկ (Պորենացի, II, Ծ.):

ւողիւսով կազմւում են նաեւ ուրիշ կապակցութիւններ, որոնք, սակայն, ձեռք են բերում գարձվածքային արժեք:

Գրարարում մի շարք չեզոք բայեր ուղիղ խնդիր հայցական են վերցնում իրենց արմատը. այս երեւոյթը գոյութիւն ունի ամեն լեզվում՝ լինի բանավոր, թե գրավոր. մեր խոսվածքները շատ են հարուստ այս տեսակ խնդրառությամբ: Չեզոք բայերի հայցականով խնդիրները կարող են առաջանալ նաեւ սրանց անալոգիայով: Ահա մի քանի օրինակներ. քնած էի հողի քուն (*Իսահակյան*): Պարիկը նինջ է ննջում (*Բ., 3-րդ, 119*): Քո խաղը խաղա, ջան գյուլում ասա (*Թումանյան*): Ես ահավոր երդում երգվեցա (*Մուր., 3-րդ, 326*):

Չեզոք բայերի հայցականով խնդրառութիւնը արդյունք է նաեւ բայ-իմաստի այնպիսի փոփոխութեան, երբ հին չեզոք բայը ստանում է մի ներգործական բայի նշանակութիւն, այսինքն՝ տեղի է ունենում իմաստի երկիւնդիւմ. ապրել չեզոք բայը ստացել է զգալ, կրել, ունենալ բայերի նշանակութիւն և ըստ այժմ ստանում է ուղիղ խնդիր հայցական. օրինակ՝ Աւագյանը ինքն իրենով ապրեց վիճակը մի մարդու (*Ն. Զ., Հ., 435*):

Արուսը նույնպէս ապրում էր խորագույն տագնապներ (*Եւլին տեղում, 150*): «Հյուսիսամիայում» տանել բայը ունի ղիմանալ նշանակութիւնը. սրա հետեանքով մենք գտնում ենք այդ բայի տրականով խնդիր հիշված տեղում: Ես չէի համատալու, թե կարելի է տանել այսքան տանջանքի: Կարող եմ տանել այն սյով բամբասանքներին: Ափսոս չկարողացաւ տանել այնքան աշխատութեանների տառապանքին (*Հյուս., 58, էջ 108, 136, 160*): Սրան հակադիր Բաֆֆին, Շիրվանզադեն երբեմն համբերել բայը կիրառում են տանել նշանակությամբ, սրտեղ հանգես է գալիս հայցական հոլովով խնդիր. օրինակ՝ Ես չեմ կարող համբերել նրա ներկայութիւնը իմ տան մեջ (*Շիրվ., 6-րդ, 213*):

Հաճախ չափածո խոսքի մեջ խնդրառութիւնը զոհւում է պոետիկ միջոցներին, այսինքն՝ քերականական ձեւը չի պահպանւում, որովհետեւ նույն շարքում գտնվող այլ բառեր իրենց իսկական կերպարանքով պահանջում են իրենց կողքին գործածվող բառի այլաձեւութիւնը. օրինակ՝ Ես սիրում եմ... Քեզ, մայրիկիս, հայրենիքիս (*Հ. Շիրազ, Ե. Հ., 230*): Իջանք ներքեւ կարգով, շարքով մարդուց անցանք մենք արջին, արջից հովքին, հովքից սողունն ու սողունիցը ձկան (*Թ., 2-րդ, 156*):

Ինչպէս նկատելի է օրինակներից ներգործական և չեզոք բայերը խնդրառութեան մեջ որոշ շփման կետեր են հանգես բերում: Այդ շփման կետերը մեզ իրաւունք չեն տալիս, որ անտես առնենք խնդրառութեան դերը բայասեւերի տարրերակիման մեջ. դա շատ կարեւոր մի հանգամանք է, ուստի իզուր չէ, որ գալորոցական քերականութիւնը կառչել է հենց դրանից:

Խնդրառութեան հետ բայասեւերի որոշման մեջ դեր է խաղում նաեւ կրավորականի կազմութիւնը: Սակայն հենց այստեղ նույնպէս որոշ երեւոյթներ թույլացնում են դրա տարրերակիչ առանձնահատկութիւնները. այնպիսի բայեր, ինչպիսիք են կսրոտել, օգնել, որ մեր լեզվում արդեն ներգործական նշանակութիւն են ձեռք բերում, մանավանդ վերջինը, կրավորական չեն կազմում. իսկ չեզոք նստել, նեծնել, զնալ բայերը բանավոր խոսքի մեջ, բնականորեն նաեւ գրականում, ստանում են կրավորա-

կան ձևեր. օրինակ՝ ասվում է. այս ձին չի հեծնվում, այդպես չի գնացվի այստեղ չի նստվի և այլն:

Ինչ էլ որ լինի, հայցական հոլովով խնդիրը պետք է վերցվի բայասեռերի տարբերական հատկանիշ. դա միակ հոլով է, որ խնդիր է դառնում միայն բայերի, իսկ նմացած հոլովները կարող են խնդիր դառնալ և բայերի, և ածականների ու գոյականների: Եթե հայցականը նույնիսկ կապի խնդիր է, դարձյալ ենթարկվում է որևէ բայի: Բայը փոխվելով բայանվան, բայածականի՝ մյուս բոլոր հոլովները պահպանում են իրենց ձևն ու բովանդակությունը, իսկ հայցականը անմիջապես փոխվում է սեռական հոլովի, որից առաջանում է, այսպես կոչված, խնդիր սեռականը:

Ուրեմն՝ պետք է եզրակացնել, որ հայցական հոլովով ուղիղ խնդիր են առնում այնպիսի բայերը, որոնց գործողությունը փոխանցվում է, անցնում է մի այլ առարկայի վրա. բայց հենց այստեղ է, որ վերոհիշյալ տատանումները նկատվում են: Այն բայերը, որոնք միայն վիճակ ու դրություն են ցույց տալիս, որոնց գործողությունը չի անցնում մի ուրիշ առարկայի վրա, կոչվում են անանցողական բայեր՝ հակառակ անցողականների, որոնց գործողության համար օբյեկտ է պահանջվում: Բայց լեզվի մեջ հաճախ վիճակ, դրություն արտահայտող բայերը մտածվում են իրենց գործողություն արտահայտող բայեր: Եթե նստել առհասարակ վիճակ է նշանակում, ապա ձի նստելը, իսկապես վիճակի դրությունից անցնում է գործողության: Իսկ չեղոք համարված օգնել բայը ոչ մի ժամանակ դրություն չի արտահայտել, միշտ էլ գործողության բայ է եղել. եթե ձևականորեն չենք կարող ասել օգնվել, բայց մոքով ու տրամաբանությամբ դա միանգամայն ունի է. այսինքն՝ միշտ էլ կարող ենք մոքով պատկերացնել այն մարդուն, որ օգնվում է մյուսի կողմից: Պետք է կարծել, որ օգտվել բայը իր իմաստային որոշ առանձնացումով օգնել բայի կրավորականի արձագանքն է:

Մ. Առեղյանը բերում է այսպիսի մի օրինակ (Ցավալի է նկատել, որ մեր մեջ օգնելու և օգնվելու գործն էլ ստոր շահատակությանց առարկա դառնալ սկսած է. տես «Աշխարհարարի շարահյուսություն», էջ 101). սա արհեստական լինելով հանդերձ՝ ցույց է տալիս, որ այդ բայը ըմբռնվում է իրեն ներգործական՝ նույնիսկ կրավորականի կազմության տեսանկյունով: Սրան հակադիր ուժեղ գործողության հաղթել բայը իր իսկական ու բնական կրավորականով հանդերձ՝ առնում է տրական՝ հոլովով խնդիր:

Այժմ խոսենք մի այլ հարցի մասին, որ դարձյալ կապված է հայցական հոլովի հետ և դարձյալ մեր խնդրառության կարևոր առանձնահատկություններից մեկն է:

Անձ արտահայտող գոյականների հայցականը գրվում է տրականաձև: Ոմանք կարծում են, թե սա նոր երևույթ է և հատուկ է միայն մեր նոր գրական լեզվին: Բայց պետք է նշել, որ անձի և իրի հայցականի տարբերակում առանձին պարագաներում հատուկ է նաև մեր հին լեզվին: Ուշագրություն չի դարձվել այն հանգամանքի վրա, որ գրաբարում մի շարք բայերի կրկնակի հայցականներից երկրորդ կամ անորոշ հայցականը իր լինելու դեպքում հայցական է, իսկ անձ լինելու դեպքում՝ տրական, օրինակ՝ վախճան լաուրթեան զցանկութիւն սահմանեցին (Եզն. 3-րդ): Ջգործ աղիտութեան սոցա անմեղութիւն համարեսցին (Ագ., 94): Սակայն ուսու-

ցանել, զգեցուցանել, վարդապետել, ծանուցանել, յիշեցուցանել, ջամբել և մի քանի այլ բայեր երկրորդական անձի խնդիր են առնում տրականով. օրինակ՝ Ուսուցանել ամենեցուն զօրէնս (Ագ., 256): Ջպատդամբ երկնաւորս ձեզ ջամբել (Ագ., 240): Ջօրութիւն զգեցոյց նոցա (Եղն., 4-րդ, Թ.): Ծանուցէք ժողովրդոց զգործս (Ա. Մնաց. ԺԶ, 8):

Այն հանգամանքը, որ այդ տեսակ բայերի անձի խնդիրը գրվում է նաև հայցականով, ցույց է տալիս, որ այդտեղ անձի և իրի գործածութեան երկվեզկում արդեն առաջացել էր գրաբարում: Ահա մի քանի օրինակներ ևս, որտեղ անձի երկրորդական խնդիրը հայցականով է. Դու իսկ ուսուցեր զնոսա ուսումն (Երեմ., ԺԳ 21): Գամեցաւ ուսուցանել զտգէտսն զծածկեալ խորհուրդսն: Զմեզ գինչ հարցանելոց էք (Բ. Մակ., Է, 2):

Այն, ինչ որ գրաբարում կատարվել է, այսպես կոչված, կրկնակի հայցականի նկատմամբ, մեր նոր գրականում գոյութուն ունի մի հայցականի համար ևս, այսինքն՝ կարճ ձևակերպված՝ անձ արտահայտող գոյականները գրվում են տրականաձև հայցականով, իսկ իրերը՝ ուղղականաձև: Այս երևույթը նույնպես բացարձակ օրենք չէ. սրան մենք կանգրագրադանաք, բայց մեր լեզվում այժմ մի ուրիշ տենդենց է նկատվում. այս տենդենցը անշուշտ նոր չէ: Ոչ միայն անձ ցույց տվող գոյականներն են տրականաձև հայցականով գրվում, այլև շնչավորները: Հայցականի անձի և իրի տարբերակումը դառնում է շնչավորի և անշնչի տարբերակում:

Հայցական հոլովի այս տեսակ զանազանումը ավելի խորանում է մեր լեզվում այն ժամանակ, երբ ուղղական ու հայցական հոլովի ձևաբանական ու շարահյուսական տարբերակիչ նշանները վերանում են:

Սլավոնական լեզուները զանազանում են շնչավորի ու անշունչի հայցականները, որ միանգամայն տրամաբանական է լեզվա-պատմական, մտածողութեան ու քերականական կատեգորիաների ձևավորման տեսակետներով: Այն գոյականները, որոնք ի վիճակի են ինքնուրույն գործողութուններ կատարելու, շարժվելու, մի տեղից մի այլ տեղ փոխադրվելու, դառնում են առանձին կատեգորիայի գոյականներ՝ հակադրվելով ինքնուրույն գործողութուն չկատարող, անշարժ առարկաներին, որոնք ձևավորվում են իրրե առանձին կատեգորիայի բառեր:

Պատճառը հասկանալի է. առաջինները ակտիվ են, կարող են ենթակա և ուղիղ խնդիր լինել. և որովհետև միանման ձևերում կառաջանա երկզիմութուն, այսինքն՝ ենթական ու խնդիրը չեն զանազանվի, ուստի ուսուցրենում (նաև մյուս սլավոնական լեզուներում) շնչավորների հայցականը գրանորվում է սեռական հոլովի ձևով, իսկ անշունչներինը՝ ուղղականի ձևով: Այս էլ նկատենք, որ այդ տեսակ տարբերակումը առաջանում է հոլովական վերջավորութունների իրրե այդպիսին ձևավորվելուց հետո, այլապես լեզուն կարող էր գրա համար առանձին մասնիկ ստեղծել: Իսկ ինչու անշունչները հայցականում սեռականաձև չեն լինում, այլ մնում են ուղղականաձև. սա պարզ է. քանի որ գրանք իրրե ենթականեր սկզբնապես հանդես չեն գալիս. քստ էութեան պատիվ լինելով՝ ակտիվի ֆունկցիայով ուշ են հանդես գալիս և այն էլ միայն անալոգիայով: Իսկ այս շրջանում հիշյալ պրոցեսը արդեն ավարտված է լինում:

Սակայն հենց ուսուցրենում, որտեղ շնչավորի ու անշունչի կատեգորիաները որոշակի տարբերակված են, երբեմն մեկը փոխարինվում է մյուսով:

Այն, ինչ որ երբեմն քերականորեն դրվում է անշունչների կատեգորիայի մեջ, իրականում շնչավոր է. և հակառակը, այն, ինչ որ քերականորեն շնչավոր է, իրականում անշունչ է: Սրա հետ միաժամանակ խոսողը հաճախ ինքն է շնչավորում անշունչ առարկան, կամ շնչավորը անշունչ է դարձնում իր մտքում: Եվ վերջապես հաճախ խոսողը չի կարողանում «րոշակի կողմնորոշվել» առարկան շնչավոր է, թե անշունչ: Այս դեպքերում հայցականի գործածությունը շնչավորի և անշունչի կատեգորիաների տարբերակման ընթացքում կորցնում է իր որոշակիությունը և երբեմն միևնույն առարկան մեկ հանդես է գալիս իրեն շնչավորի հայցական, մեկ անշունչի¹:

Ժիշտ և ճիշտ միևնույն բանը կատարվում է մեր գրական լեզվում: Նախ և առաջ իրենց օրինաչափություններով ընդհանուր ու մոտիկ շփման կետեր են հանդես բերում անձ ցույց տվող գոյականները և մյուս շնչավորները, քան այս վերջինները և անշունչները: Եթե կարելի է ասել, շնչավորները միջին օղակում են գտնվում: Բայց թե առաջ, թե այժմ դրանք հակվում են դեպի անձերը, քան անշունչները, այսինքն՝ դրվում են տրականաձև հայցականով: Ահա մի քանի օրինակներ: Մոտ բերին նմույսներին (Դ. Դ., Վ., 51), սակայն անգոր է մի նմույսի սանձահարել (Իս., 3-րդ, 209):—էդ կարելի է—համաձայնվեց ծերունին և սկսեց մաշկել գազանիկին (Վ. Ա. Ա., 211), Խե ինչ հնարքով էր նա նստի՞նք բերում իրեն մոտ (Նույն տեղում, 270): Թարմ կանաչը գայթակեցնում էր այծերին (Նույն տեղում, 258): Բերել արծվին (Հ. Շիրազ): էշին պայտել (Փափ., 278): Ինչպես թողնել այն սիրելի նմույսին (Բ., 3-րդ, 18): Կիսնդրեի քեզանից ընդունել ձեզ մոտ, որպես հյուր, իմ ձիուն (Նույն տեղում, 19): Նա իր կյանքում մի մրջյունի անգամ չէ վիրավորել (Նույն տեղում, 311): Եզներին ծախեցի (Նար., 1-ին, 140): Կատվին կտրիցն էլ գցես, մեջքը գետնին չի առնի (Առաժ., 81): Նրանք իջան ձորը և տեսան արջին, կովին՝ հոշոտելիս (Վ. Ա., Ո. Պ.): Այս օրինակները թվադրում են ասել, որ խնդրա ության տեսակետից նույնիսկ ներգործական բայերի մեջ տարբերություններ կան. օրինակ՝ բերել, սանձահարել, թողնել, ընդունել, ծախել: Բայերի մոտ տրականաձև հայցականը ավելի անհարթ է, քան մյուս դեպքերում, բացի այս՝ խնդիրները և դրանց այս կամ այն ձևով գործածելու տրադիցիան նույնպես հարկադրում են այս կամ այն շեղումի կողմը:

Սակայն իրերը տրականաձև հայցականով թողնում են ոճարանական այնպիսի տավորություն, որ կարծես խոսողը կամ դրողը հայ չէ, այլ մի օտար մարդ, որ նոր է սովորում հայերենը. օրինակ՝ ճիմարությունների կարգապող չեմ (Մ. Ն., 1-ին, 305). սպասավորի իշխանությանը պետք է հարգել (Մուր., 1-ին, 309): Սքողել լուսնին (Անթ., 429): Հալածեցեք բնությանը (Նար., 2-րդ, 103): Թշվառությանը ոչ ոք չի տեսնի (Նար., 1-ին, 32): Վկայում են, որ տեսել է մահվան ու թշնամուն (Անթ., 609): Ես իմ գրչին ազատեցի դատաստանական խարդախանքների ճահճից (Շիրվ., 7-րդ, 138): Պաշտում էին լնին (Վ. Ա., Ս. Ա.): Մաքրում է մարդուն, ինչպես կրակն ոսկուն... (Շիրվ., 3-րդ, 23): Խնայեցին միայն Մա-

¹ Այս մասին մանրամասն տես В. В. Виноградов, русский язык, 1947, стр. 89—92.

միևնույն ժամանակ շիկակարմիր վրանին (Բ., 3-րդ, 589): Ձև կարող ներել քո ամբաստանություններին (Նույն տեղում, 89): Ինչպես մի թույն հալածում է մի այլ թույնին (Նույն տեղում, 563): Այժմ մեր լեզվի համար դրանք անմշակության, խոսակցական սխալ խնդրառություն տպավորություն են թողնում:

Սրան հակադիր, բայց ոճարանորեն շատ ավելի խորթ է, երբ անձ յուրյն տվող գոյականները հոգով ուղղականաձև հայցական են դրվում, այսօր այս տեսակ ձևերը մեր լեզուն մերժելով մերժում է. ահա մի քանի օրինակներ: Թարեյ նախաստեղծ մարդիկը (Բ., 2-րդ, 238): Բդեշխը պատանդ վերցրին (Դ. Դ., Վ., 465): Սկսել էր սիրել հայ շինականն ու գլուղացին (Մուր., Ընտ. երկ., 1-ին, 65): Դատապարտում է պարտավորը (Մ. Ն., 2-րդ, 302): Պատժե՞ք մայրը (Հյուս., 58, էջ, 108): Փախցնում է իր սիրունին (Բաֆֆի): Գրկեցի իմ ազատիչը (Նույնը):

Նույնանման խնդրառություն օրինակներ գտնում ենք նաև անունների գործածության մեջ, մի բան, որ այլևս չի կարելի թույլ տալ, որովհետև մեր լեզվի խնդրառություն ներկա վիճակը անձնանունների գործածության մեջ հասել է որոշակի ձևի՝ առանց բացառության, բայց հին գրողների մոտ նկատվում են այսպիսի օրինակներ: Պիտի զոհենք կամ ժողովուրդը, կամ իմ Ռուզանը (Մուր., 4-րդ, 230): Նա որդեգրեց նրա գուտարը՝ Շահանդուխտը (Մուր., 3-րդ, 246): Հայկունին «Դիպվածով» տեսած, Դրամբյան (Թ., 4-րդ, 99), այսինքն՝ Հայկունուն տեսած: Բր սրտում ու մտքում միայն Մարֆուշկան է ունենում (Անթ., 388): Ու Նազարն ով կտա, հոգին դառել է կորկի հատ (Թումանյան):

Այժմ քննենք, թե այս տեսակ երևույթները ինչպես են առաջանում լեզվում: Իսկա դրողի անփութությունից, հայերենի խնդրառության կանոնների մանրամասնությունները լավ չգիտենալուց, այստեղ դեր են խաղում մի շարք երևույթներ, որոնք կենդանի խոսքի առանձնահատուկ գծերն են և բնորոշ կարող են լինել ամեն լեզվի համար:

Առաջին հերթին պետք է նշել մեր հին գրական լեզվի խնդրառության ազդեցությունը, որ չէին կարող իրենց վրա չկրել մեր գրողներից շատերը:

Երկրորդ՝ այս տեսակ խնդրառության պատճառ է հանդիսանում անշունչ և շնչավոր առարկաների անորոշությունը, այսինքն՝ գրողը չի կարողանում կողմնորոշվել իր խնդրի վերաբերմամբ. մի դեպքում նա կարող է խնդիրը շնչավոր պատկերացնել, մի այլ դեպքում՝ անշունչ. կամ մեկը այսպես է պատկերացնում, մեկ ուրիշը՝ այլ կերպ. օրինակ՝ Եվ Անգլիան ամեն կերպ աշխատել է միշտ Ռուսաստանի դեմ ստեղծել մի պատվար, պաշտպանել է մերթ Պարսկաստանին մերթ Տաևկաստանին և առհասարակ Ռուսաստանին թշնամի մի ուժ (Թ., 4-րդ, 229): Իրենց հետևյալում թողեցին ոչ միայն արևելքի երկրներին, այլև արևմտյան Եվրոպայի հին արդյունավետության երկրներին (Ս. Հ., 272, 52 թ.): Դուրս են մղում աճող թարմ ուժերին (Նույն տեղում, 274): Այս օրինակներում երկիր բառը շնչավորված է, ուստի դրված է տրականաձև: Իսկ ինչ վերաբերում է ուժ բառին, ապա Թումանյանից բերված օրինակում դա գործածված է իր բուն նշանակությամբ, ուստի ուղղականաձև է, մյուս օրինակում ուժ վերցված է մարդկանց փոխարեն, ուստի շնչավորված է և դրված է տրականաձև

Այս նույն սկզբունքով Գեղամ Սարյանը գրում է. Ով է ծնել շողշողուն այս պատանին, այսինքն՝ Սովետական Հայաստանու թումանյանը ունի՝ Հայկունին «դիպվածով» տեսած, Դրամբյան. Հայկունին, նշանակում է հայկունու գիրքը:

Անհնար է այստեղ թվել այն բոլոր բառերը, որոնք ենթակա են շնչավորման կամ բնդհակառակը, դրանք անբնդհատ փոխվում են՝ բոս կոնտեքստի, ըստ խոսողի ըմբռնումների և այլն:

Երբեմն հոլովների ֆունկցիաների խառնակումը կամ շփոթումը կարող է պատճառ դառնալ խնդրառության փոփոխման: Գրողը երկգրիմությունից խույս տալու համար փոխում է խնդրի ձևը, որ այլապես կնմանվեր նախադասության մի այլ անդամի, որը բոլորովին այլ ֆունկցիա ունի, այսինքն՝ քերականության կանոնը զոհարելով է իմաստին. օրինակ՝ Մուրացանը մի տեղ գրում է. Եվ այգալիսով ամուսնուն դարձնում ենք յուր զինը, մորն՝ յուր զավակը, քոջն՝ յուր եղբայրը, որգվոյն՝ իրենց հայրը (Մուր., 4-րդ, 359): Եթե Մուրացանը գրեր՝ ամուսնուն դարձնում ենք յուր կնոջը, մորն՝ յուր զավակին, քոջը՝ յուր եղբորը, որգվոյն՝ իրենց ուրը, չէինք տարբերի, թե որն է մատուցման անուղղակի խնդիրը և որն է ուղիղ խնդիրը: Վերևում մենք տեսանք, որ երկիր բառը գրված էր տրականաձև հայցականով, իսկ տալ բայի մոտ տրականաձև հայցականը անկարելի է, մանավանդ եթե բայը ունի տրականով անուղղակի խնդիր, որ խանգարում է մյուսի նույնաձևությանը. ստացվում է մի յուրահատուկ քերականական տարնմանություն: Համեմատիր Բեմիճյանից բերված հետևյալ նախադասությունը. Երկիրը տանք պարսիկներին (Դ. Դ., Վ., 465): Իսկ նույն գրքից բերված հետևյալ օրինակում ուղղականն է խանգարում, որ ուղիղ խնդիրը ուղղականաձև գրվի. օրինակ՝ Դու քաջ գիտես, թե ուր է տանում մեր երկրներին այս հրամանը (Նույն տեղում, 181):

Տալ բային հակադիր հազցնել բայի բուն ուղիղ խնդիրը տրականաձև է. այստեղ երկու հանգամանքն է գեր խաղում. հազցնել բայի բուն ուղիղ խնդիր անձից դուրս այլ տեսակի բառ չի ենթագրվում, ըստ այդ անալոգիայի իրերն էլ գրվում են տրականաձև. բայի սրանից չիշյալ բայը ունի երկրորդական խնդիր հայցական, որ տարնմանում է բուն ուղիղ խնդիրը. օրինակ՝ Շանը շապիկ կհագցնե, կատվին՝ վարտիք (Առած., 82): Բուն ուղիղ խնդիրներն են շանը, կատվին, որոնք ոչ մի կերպ ուղղականաձև չեն կարող կիրառվել: Փողովուրդը նիհար մարդու վերաբերյալ ասում է՝ ոնց որ փայտին շոր հագցնես: Ուրեմն ուղիղ խնդրի ձևը ոչ միայն կախված է բայի սեռից, այսինքն՝ բայը ներգործական է, չեզոք, այլև տվյալ բայի այլևայլ խնդիրներ ունենալու հանգամանքից, որոնք ազդում են ուղիղ խնդրի ձևին՝ կապված լեզվի իմաստային առանձնահատկությունների հետ:

Լեզվի մեջ խնդիրների ձևը կարող է փոփոխվել նաև բառախաղի հետևանքով: Այս երևույթը մասնավոր մի բան է լեզվի մեջ, բայց և այնպես որոշ դեր խաղում է, այսինքն՝ պատճառ է դառնում ձևափոխության: Հեղինակը օգտագործում է խնդրառության հանգամանքը բառի մեջ երկրմաստություն զնելու, խոսքը աշխույժ ու կենդանի դարձնելու. օրինակ՝ իսկ Սև Դանին՝ արևի որդին, Արշալույսն էր գիտում. (Անթ., 233): Հեղինակը արշալույս բառով հատուկ անվան և հասարակ անվան բառա-

խաղ է կազմել. բնագրում Արշալույսը աղջիկ է, բայց հեց այս գործածության մեջ կա նաև մյուս սովորական նշանակությունը:

Բառախաղի է մոտենում նաև այն հնարը, երբ խոսակիցը խոսողի բառաձևերը նույնությունից կրկնում է՝ առանց հաջվի առնելու իր նախագասություն ու խոսողի նախագասության փերականակա՞ն հարաբերություններին տարբերությունն ու անհամատեղելիությունը. օրինակ՝

— Նրան երկիր ով կտա:

— Նախարարը, հոգևորը, ով:

— Կսրենք նախարարն էլ, հոգևորն էլ:

— Թշնամի, բարեկամ չես ճանաչում...

— Թշնամին տեսա, բարեկամը չտեսա (Գ. Դ., Վ., 77, 95):

Հոգը նույնպես գեր է խաղում հայցական հոլովին այս կամ այն ձևը տալու մեջ: Մեծ մասամբ որոշյալ հայցականները հակվում են տրականա՞ծ լին, այս երևույթը պարզ նկատվում է ունենալ բայի խնդրառության հանգամանքով. քանի որ այդ բայը որոշյալ խնդիր չունի, չունի նաև տրականա՞ծ հայցական, օրինակ՝ ասվում է՝ ես տեսա մի տղայի, բայց չի ասվում՝ ես ունեմ մի տղայի:

Մեր կարծիքով մեր լեզվի զարգացումը ընդարձակում է տրականա՞ծ հայցականի գործածության սահմանները. եթե այս խոսքը հետագայի համար չընդունենք, ապա մինչև այժմ ընթացքը այդ է ցույց տվել: Նազարյանի, Նալբանդյանի ժամանակներից սկսած արարատյան բարբառի հետևողությունից անընդհատ ուղղականա՞ծ հայցականները տեղի են տալիս: Մի շրջանում նույնիսկ անձնանունները հայցականա՞ծ էին կիրառվում: (Վերջապես աշրդր գտնում է յուր սիրական Ասլին (Հյուս., 58, 179): Բաֆֆու և այլոց մոտ խնդրառության այս ձևը գրքային բնույթ ունի, չի բխում մեր գրական լեզվի զարգացման տեղեկեցներից: Խնդրառության հիշյալ երևույթը արգեն վերացված է: Ըստ պրոֆ. Մ. Արեղյանի՝ անձնանունները փոխանունարար կիրառելիս, պետք է գնել ուղղականա՞ծ հայցականով, այսինքն՝ պետք է ասել՝ կարգալ Բաֆֆի, Շիրվանզադե, Չարենց և ոչ Բաֆֆուն, Շիրվանզադեին, Չարենցին: Չնայած Մ. Արեղյանի այս ճիշտ պահանջին՝ այնուամենայնիվ այժմ հատուկ անունների փոխանունարար հիշյալ գործածությունները տրականա՞ծ հայցականով են: Ուղղականա՞ծ հայցականը այս դեպքում ստացել է գրքային արտահայտություն:

Խնդրառության այս տարօրինակությունները կարող են լինել նաև քարացած հին խնդրառության արդյունք. օրինակ՝ խոսակցական լեզվում ասվում է՝ թե Կարապետ գրել էս, արի տար (այսինքն՝ անհայտացել է): Թումանյանը գրում է. ծառի վրա կուչ է գալի ու Նազարն ով կտա, հոգին գտել է կորկի հատ:

Մյուս տիպի խնդիրների ձևափոխության ընթացքը պարզիպարզո երևում է բերված օրինակներից, և այստեղ ավելորդ ենք համարում մի առ մի նշել, թե ինչպես հին ուղղականա՞ծ հայցական խնդիրները աստիճանաբար ու բնականորեն դառնում են տրականա՞ծ:

Այս հոգվածով մենք նպատակադրվել ենք ոչ այնքան ճշտել այս կամ այն բայի խնդրի ձևը, որքան ցույց տալ, թե խնդրառության մեջ միևնույն բայի տարբեր խնդիրները, կամ միևնույն խնդրի զանազանա՞ծությունները ինչի արդյունք են և ինչ երևույթներով են պայմանավորված:

ՀԱՄԱՌՈՏԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աղ. Աղաթանգևոս
2. Անթ. Սովետահայ դրականության անթուղիա, Երևան, 1951 թ.
3. Առաժ. Ա. Ղանալանյան, Հայկական առածանի, Երևան, 1950 թ.
4. Դ. Դ. Վ. Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1951 թ.
5. Եզն. Եզնիկ Կողբացի
6. Ե. Զ. Ե. Զարենց, Երկեր, Երևան, 1932 թ.
7. Ե.—Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան, 5 հատորով, 1940—1951 թթ.
8. Իս. Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, Երևան, 1950—1951 (չորս հատորով)
9. Հյուս. Հյուսիսափայլ, Մոսկվա, 1858 թ.
10. Հ. Շիրադ. Ե. Հ. Նույնի Երգ Հայաստանի, Երևան, 1940 թ.
11. Մ. Ն. Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1940—1949 թթ.
12. Մուր.—Մուրացան, Երկերի ժողովածու, Երևան, 1951—1954 (հինգ հատորով)
13. Նար.—Նար-Դոս, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1938—1950 (7 հատորով)
14. Ն. Զ. Ն. Զարյան, Երկեր, Երևան, 1945—1949 թ.
15. Ն. Զ. Հ.—Ն. Զարյան, Հացավան, Երևան, 1947 թ.
16. Շեքս. Վ. Շեքսպիր, Ընտիր Երկեր, Երևան, 1951 թ. (երեք հատորով)
17. Շիրվ. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1950—1952 թ.
18. Ռ. Պ. Ռ. Պատկանյան, Ընտիր երկասիրություններ, 1893 թ. (երկու հատորով):
19. Ս. Խան. Հ. Ս. Խանդադյան, Հողը, հատոր 1-ին, Երևան, 1954 թ.
20. Ս. Հ. Սովետական Հայաստան, օրաթերթ
21. Վ. Ա. Ո. Պ. Վ. Անանյան, Որսորդական պատմվածքներ, Երևան, 1953 թ.
22. Վ. Ա. Ս. Ա. Վ. Անանյան, Սևանի ափին, Երևան, 1951 թ.
23. Բ. Բաֆի, Երկերի ժողովածու, Երևան, 1949—1950 թթ.
24. Փաի. Վ. Փաիադյան, Ընտիր Երկեր, Երևան, 1951 թ.